ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 153
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (15.04.2000-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2000.04.05/6(104)
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	04.04.2000
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	04.04.2000
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթիվ	04.04.2000
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	15.04.2000

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
4 ապրիլի 2000 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2000 թվականի N 153
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների անդամության երկաստիճան համակարգ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ժամանակավոր օրինադրությունը հաստատելու մասին» N 205 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ժամանակավոր օրինադրության՝

ա) 11-րդ կետի առաջին պարբերությունը «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսներից» բառերից հետո լրացնել «թղթակից անդամներից» բառերով.

բ) 12-րդ կետի «դ» ենթակետը «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսները» բառերից հետո լրացնել «թղթակից անդամները» բառերով.

գ) 28-րդ կետի «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսներից» բառերից հետո լրացնել «կամ թղթակից անդամներից» բառերով.

դ) 35-րդ կետի չորրորդ պարբերությունը «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսներից» բառերից հետո լրացնել «և թղթակից անդամներից» բառերով.

ե) 40-րդ կետը «ակադեմիկոսները» բառից հետո լրացնել «թղթակից անդամները» բառերով.

զ) 42, 43, 46-րդ կետերը և 48-րդ կետի չորրորդ պարբերությունը «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների» բառերից հետո լրացնել «և թղթակից անդամների» բառերով.

է) 44-րդ կետի «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների» բառերից հետո լրացնել «թղթակից անդամների» բառերով.

ը) 45-րդ կետի երկրորդ պարբերությունը «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսի» բառերից հետո լրացնել «և թղթակից անդամի», իսկ «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսներին» բառերից հետո «և թղթակից անդամներին» բառերով.

թ) 41-րդ կետն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ ընտրվում են այն գիտնականները, ովքեր գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող աշխատանքներով».

ժ) 47-րդ կետն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամների թեկնածուների ընտրության ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն տվյալ բաժանմունքի՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսները և թղթակից անդամները».

ժա) 48-րդ կետն առաջին պարբերությունից հետո լրացնել «Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնելու ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամների թեկնածուների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում է տվյալ բաժանմունքում ընդգրկված ՀՀ ԳԱԱ-ի անդամների ընդհանուր թվի առնվազն երեք քառորդը», իսկ հինգերորդ պարբերությունից հետո «ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամի թեկնածու են համարվում այն անձինք, ովքեր ստացել են առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան տվյալ բաժանմունքի քվեարկության ցուցակում ընդգրկված ՀՀ ԳԱԱ-ի անդամների թվի երկու երրորդը» նոր պարբերություններով.

ժբ) 49-րդ կետի՝

առաջին պարբերությունը «վճռական ձայնի իրավունք ունեն ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսները» բառերից հետո լրացնել «իսկ թղթակից անդամ ընտրելիս՝ ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսները և թղթակից անդամները», իսկ «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների» բառերից հետո՝ «և թղթակից անդամների» բառերով.

երկրորդ պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ ընտրված են համարվում այն անձինք, ովքեր ստացել են ցուցակային կազմի մեջ

ընդգրկված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամների ձայների պարզ մեծամասնությունը»:

3. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային՝ եռամսյա ժամկետում՝

ա) անցկացնել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 24 թղթակից անդամի ընտրություններ.

բ) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսների ու թղթակից անդամների առավելագույն թիվը սահմանելու և այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համար նախատեսված միջոցների վերաբաշխում կատարելու վերաբերյալ:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամության երկաստիճան համակարգից միաստիճան համակարգի անցնելու մասին» N 73 որոշման 1-ին կետը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Սարգսյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան